Ընդունվել է
Ակադեմիական խորհրդի
թիվ 3 նիստում, 2024 թ. դեկտեմբերի 16-ին

Adopted by Senate
Session #3, 16 September 2024

Հաստատում եմ
Ռեկտոր
_____ Ս. Լ. Հարությունյան
16/12/2024
Approved by Rector S. L. Harutyunyan

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN HAYBUSAK UNIVERSITY

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԿԱՐԳ
PROMOTION OF SCIENTIFIC RESEARCH: RULES & PROCEDURES

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
I. GENERAL PROVISIONS

1.1. Սույն կարգով Երևանի «Հայբուսակ» համալսարանը (այսուհետ՝ ԵՀՀ) սահմանում է ներբուհական գիտական հետազոտությունների խթանման միջոցները և ընթացակարգը: Այն ներառում է դրամաշնորհների, հետազոտական կրթաթոշակների և կրթական այլ ռեսուրսների տրամադրման ու հետազոտական պրակտիկայի աջակցության համար հայտերին ներկայացվող պահանջներն ու գնահատման սկզբունքները:

1.2. Դրամաշնորհը, կրթաթոշակը և կրթական այլ ռեսուրսները գիտական գործունեությունը խրախուսելու նպատակով ԵՀՀ բյուջեից կամ ակտիվներից անհատույց տրամադրվող դրամական կամ նյութական հատկացում է:

1.3. Գիտական հետազոտությունների խթանման վերոնշյալ հատկացումները տրամադրելու որոշումը ընդունվում է մրցութային կարգով: Մրցույթին կարող են մասնակցել համալսարանի ուսանողներից, դասավանդողներից և հրավիրված մասնագետներից կազմված հետազոտական խմբերը:

1.4. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է **հայտ**, որը ներառում է հետազոտության կամ հետազոտական պրակտիկայի **նախագիծը** և պահանջվող այլ փաստաթղթեր:

1.5. Մրցույթը կազմակերպում, հայտերը քննարկում և դրա արդյունքներն ամփոփում է համալսարանի ռեկտորի հրամանով կազմավորված մրցույթային **հանձնախումբը**:

1.6. Կարգով չնախատեսված իրավիճակներում որոշում է ընդունում ԵՀՀ ակադեմիական խորհուրդը:

1.7. Նախագծի իրականացման տևողությունը մինչև 12 ամիս է:

1.1. This document defines Yerevan Haybusak University's (hereinafter referred to as YHU) rules and procedures for promoting scientific research. It includes the requirements for applications for grants, research scholarships, and other educational resources, support for research internships, and evaluation principles.

1.2. The grant, scholarship and other educational resources are material or monetary means or assets provided gratuitously from the YHU budget to encourage scientific activity.

1.3. The decision to allocate funds or other assets for promoting scientific research is made through a competitive process. Research groups consisting of university students, lecturers, and invited specialists can participate in the competition.

1.4. An application to be submitted should include a research or research internship project and other required documents.

1.5. The competition is organized, applications are discussed, and results are summarized by the competition committee formed by the order of the YHU rector.

1.6. In situations not foreseen by the procedure, the YHU Senate makes the decision.

1.7. Project implementation duration is up to 12 months.

II. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
II. OBJECTIVES

2.1. Խրախուսել ԵՀՀ ուսանողների և դասավանդողների խմբային գիտական հետազոտությունները:

2.2. Նպաստել նոր գիտելիքի ստեղծմանը, նորարարական և ստեղծագործական մոտեցումների ու տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև հետազոտությունների արդյունքների ներդրմանը դասավանդման մեջ:

2.3. Խթանել ԵՀՀ համագործակցությունը ուսումնական, հետազոտական, արդյունաբերական և այլ պետական ու մասնավոր հաստատությունների հետ:

2.4. Բարձրացնել ԵՀՀ հասարակական ազդեցությունը և գիտական հեղինակությունը՝ տարածելով հետազոտության արդյունքները հանրության շրջանում:

2.5. Բարելավել ԵՀՀ գիտական միջավայրը:

2.6. Հնարավորություն տալ ուսանողներին ու աշխատակիցներին փորձ կուտակել արտաքին մրցույթներին մասնակցելու համար:

2.1. To encourage scientific research by teams of YHU students and faculty.

2.2. To contribute to the creation of new knowledge, the development of innovative and creative approaches and technologies, as well as the introduction of research results into teaching.

2.3. To promote YHU's cooperation with educational, research, industrial, and other public and private institutions.

2.4. To enhance the public impact and scientific reputation of the YHU by disseminating research results.

2.5. To improve YHU's scientific environment.

2.6. To provide students and employees with the opportunity to gain experience to participate in external competitions.

III. ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԸ
III. CALL FOR APPLICATIONS

3.1. Մրցույթի հայտարարությունը հրապարակվում է հայտերը ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետից առնվազն 20 աշխատանքային օր առաջ:

3.2. Մրցույթի հրավերը պետք է պարունակի.

ա) հայտը ներկայացնելու պայմանները՝ ներառյալ փաստաթղթերի ձևը, տեղը, վերջնաժամկետը

բ) մրցույթի մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները

գ) մասնակիցների հարցերին պատասխանելու և մրցույթի վերաբերյալ պարզաբանումներ տրամադրելու եղանակը)

դ) հայտ ներկայացնելու վերջնաժամկետը

ե) հայտերի դիտարկման կարգը և գնահատման չափանիշները:

3.1. The competition should be announced at least 20 working days before the deadline for submission of applications.

3.2. The call for applications must contain:

a) the type and form of documents and the place and deadline for their submission
b) eligibility requirements
c) the method of answering questions and providing clarifications regarding the competition
d) review procedures and evaluation criteria.

IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ
IV. RESEARCH TEAM

4.1. Նախագիծը մշակում և իրականացնում է գիտահետազոտական խումբը: Այն կարող է ներառել ԵՀՀ դասավանդողներ, որոնք կարող են ունենալ գիտական աստիճան կամ կոչում, ուսանողներ և ոլորտում ճանաչված հրավիրյալ մասնագետ:

4.2. Խմբի ղեկավարը պատասխանատու է **նախագծի** արդյունավետ ու ժամանակին իրականացման և էթիկայի նորմերին համապատասխանության համար:

4.1. The project is developed and implemented by a research group. It may include YHU students, faculty members with a scientific degree or title, and a visiting expert recognised in the field.

4.2. The team leader is responsible for the effective and timely implementation **of the project** and compliance with ethical standards.

V. ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
V. SUBMISSION PROCEDURE

5.1. Մրցույթին մասնակցելու համար **խմբի ղեկավարը** ԵՀՀ գիտխորհրդի քարտուղարին էլեկտրոնային (science@haybusak.am) և թղթային տարբերակներով հանձնում է հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում (Հավելված 1)
- Նախագիծ (Հավելված 2)
- Խմբի բոլոր անդամների մասնագիտական ինքնակենսագրությունը (CV):

5.2. Խմբի ղեկավարը և անդամները չեն կարող ընդգրկվել նույն մրցույթին ներկայացված մեկից ավելի հայտում:

5.1. To participate in the competition, the team leader submits the following documents to the Secretary of the Scientific Council of the YHU in electronic (science@haybusak.am) and paper versions:

- Application form (Appendix 1)
- Project document (Appendix 2)
- CVs of all team members

5.2. Any team member cannot be included in multiple applications submitted for the same competition.

VI. ՀԱՅՏԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ
VI. BUDGET COMPOSITION

6.1. Ֆինանսավորման առավելագույն չափը կարող է լինել **վեց միլիոն դրամ:**

6.2. Հետազոտության, աշխատանքի վարձատրության և այլ ծախսերից կազմված Հայտի **նախահաշիվը** կարող է ներառել «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ», «Հաղորդակցություն» և համապատասխան այլ հոդվածներ: **Նախահաշվի** «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ» և այլ հոդվածներով 12 ամսվա համար կարելի է նախատեսել առավելագույնը մեկ միլիոն դրամ: **Նախահաշվի** «Գործուղումներ» հոդվածով

6.1. The budget requested cannot exceed six million AMD.

6.2. The overall budget estimate, including research, labour costs, and other expenses, can include the costs of equipment, materials and services, business trips, communications and other relevant articles. The equipment, materials, services, business trips, and other relevant budget lines estimated for 12 months should not exceed one million AMD. The budget line

նախատեսվող գումարը կարող է օգտագործվել **Նախագծի** իրականացման ընթացքի կամ արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին մասնակցության համար: «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում խմբի անդամի ամսական վարձատրության չափը, ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները, պետք է չգերազանցի 80 հազար դրամը:

6.3. Խմբի ուսանող անդամների ֆինանսավորումը կարող է իրականացվել նաև հետևյալ մոտեցումներով.

- ուսման վարձի զեղչ
- կրթական նյութերի կամ առցանց ռեսուրսների հասանելիության ապահովում
- միջազգային կամ տեղական գիտաժողովի, սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի մասնակցության հնարավորության տրամադրում
- մասնագիտական փորձառություն կամ աշխատանքի աջակցություն:

for business trips may be used to participate in international conferences and present the progress of the project's implementation or its results. The monthly remuneration of a team member, including taxes and other mandatory payments, must not exceed 80 thousand AMD.

6.3. Funding for student team members can also be provided with the following approaches:

- tuition discount
- educational materials or access to online resources
- support for participation in an international or local conference, seminar or training course
- support for internship or other ways of acquiring professional experience.

VII. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ
VII. APPLICATION REVIEW

7.1. Հանձնախումբը ստուգում է **Հայտերի** համապատասխանությունը Մրցույթի հրավերի պայմաններին:

7.2. Հայտը չի քննարկվում, եթե՝

1) չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
2) չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
3) բովանդակությամբ կրկնում կամ համընկնում է որևէ այլ նախագծի հետ:

7.1. The Committee checks whether the applications comply with the terms of the call for applications and the regulations in these Rules and Procedures.

7.2. The application is not considered if:

1) does not contain all necessary documents
2) does not comply with the terms of the call for applications
3) duplicates or matches any other project.

VIII. ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
VIII. SCIENTIFIC EXPERTISE

8.1. Գիտական փորձաքննությունն անցկացնում են առնվազն 2 անկախ գիտական փորձագետներ՝ որոնք հաստատվում են ռեկտորի հրամանով: Բժշկական և բնագիտական մասնագիտությունների գծով **Փորձագետի** Հիրշի ինդեքսը (h-index)՝ պետք է լինի առնվազն 2՝ ըստ «Scopus» գիտատեղեկատվական

8.1. The scientific review is conducted by at least two independent scientific experts confirmed by the rector's decision. Medical and natural science experts' Hirsch index (h-index) must be at least 2, according to the Scopus scientific information database. Experts

շտեմարանի տվյալների: Հասարակական և հումանիտար մասնագիտությունների գծով **Փորձագետը** պետք է ունենա առնվազն 3 գիտական հրապարակում ԲԿԳԿ պարբերականներում:

8.2. Յուրաքանչյուր **Հայտի** համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության թերթիկը *(Հավելված 3):*

8.3. Փորձագետների առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 40 տոկոսը:

8.4. Հանձնախումբը անցկացնում է հարցազրույց **Խմբի ղեկավարի** հետ: Խմբի ղեկավարը սահիկաշարով հակիրճ (մինչև 10 րոպե) ներկայացնում է հայտը և պատասխանում **Հանձնախմբի** անդամների հարցերին:

8.5. Յուրաքանչյուր **Հայտի** համար **Հանձնախմբի** անդամը լրացնում է հարցազրույցի գնահատման թերթիկը (Հավելված 4):

8.6. Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 60 տոկոսը:

8.7. Հանձնախումբը հաստատում է **Հայտերի Գիտական փորձաքննության** գնահատման թերթիկները և վարման ընթացակարգը:

8.8. Հանձնախմբի և **փորձագետների** կողմից **Հայտի** բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է:

in social and humanitarian spheres must have at least three scientific publications.

8.2. For each application, the expert completes the scientific examination sheet *(Appendix 3).*

8.3. The maximum score of the experts is 40% of the maximum score of the application.

8.4. The committee interviews the team leader, who briefly (up to 10 minutes) presents the application using a slide show and answers questions from the committee members.

8.5. For each Application, the Committee members complete the evaluation sheet (Appendix 4).

8.6. The maximum score for the interview comprises 60% of the maximum score for the Application.

8.7. The committee approves the Application Scientific Expertise Evaluation Sheets.

8.8. The Committee and experts are prohibited from providing information about the application's content, the process and the results of the scientific examination to other people.

IX. ԳՆԱՀԱՏՈՒՄ
IX. EVALUATION

9.1. Հայտի գիտական փորձաքննության արդյունքում ձևավորված գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Հանձնախմբի գնահատականի գումարն է, որն ամփոփվում է հայտի գնահատման ամփոփիչ թերթիկում (Հավելված 5):

9.2. Գիտական փորձաքննություն անցած **Հայտերի** գնահատականների հիման վրա **Հանձնախումբը** ձևավորում է **Հայտերի** վարկանիշային ցանկ և միավորների անցողիկ շեմ:

9.3. Դրամաշնորհ տրամադրելու որոշումը կայացվում է նիստի բաց քվեարկությամբ, հաշվի առնելով քննարկված ծրագրերի գնահատման արդյունքները: **Հանձնախումբը** կազմում է

9.1. The assessment formed as a result of the scientific examination of the application is the arithmetic mean of the assessments of the two experts and the Committee. The result is summarised in the application evaluation summary in the leaflet (Appendix 5).

9.2. The committee designs the application rating list and admission threshold based on the review of the Applications that have passed the scientific examination.

9.3. The decision to provide a grant is made by open voting at the meeting, considering the evaluation results of the discussed applications. The committee draws up a report on the

արձանագրություն մրցույթում հաղթող ճանաչված հայտերի մասին:

applications recognised as winners in the competition.

X. ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ
X. CONTRACTING THE WINNERS

10.1. Հանձնախմբի որոշումը հաղթող հայտերի վերաբերյալ 5 աշխատանքային օրվա ժամկետում հաստատվում է համալսարանի ռեկտորի հրամանով ու հրապարակվում համալսարանի կայքում:

10.2. Ռեկտորի հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ԵՀՀ ռեկտորի և խմբի ղեկավարի, ինչպես նաև խմբի ղեկավարի և կատարողների միջև կնքվում են գիտահետազոտական աշխատանքների իրականացման մասին պայմանագրեր:

10.3. Պայմանագրերում նշվում են դրանց կողմերը, առարկան, անվանումը, կատարվող աշխատանքների սեղմ բնութագիրը, պայմանագրի գինը, այն վճարելու ձևերը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, գործելու ժամկետը, խախտելու կամ պայմանագրային այլ պարտականությունները չկատարելու հետևանքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով սահմանված այլ պայմաններ:

10.1. The committee's decision on the winning applications is approved by order of the YHU rector within five working days and published on the YHU website.

10.2. Within ten working days of the rector's order coming into force, the YHU rector and the team leader sign a contract to implement scientific research work.

10.3. The contracts must specify their parties, subject matter, title, a brief description of the work to be performed, rights and obligations of the parties, contract amount, methods of payment, term of validity, consequences of breach or failure to fulfil other contractual obligations, as well as other conditions stipulated by the Civil Code of the Republic of Armenia.

XI. ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ
XI. PROJECT IMPLEMENTATION AND RESULTS SUMMARY

11.1. Ցանկալի է, որ **նախագծի** իրագործման ընթացքում ձևավորված հրապարակումները ընդգրկված լինեն.

- ՄԳՇ-ի առնվազն Q4 քառորդում, եթե թեման բժշկագիտական կամ բնական գիտությունների ոլորտից է (առնվազն մեկ հոդված),
- ԲԿԳԿ երաշխավորած պարբերականներում, եթե թեման հասարակագիտական գիտությունների ոլորտից է (առնվազն երկու հոդված):

11.2. Նախագծերի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքները հրապարակելիս որպես աշխատավայր (affiliation) անհրաժեշտ է նշել **Համալսարանը**: Հոդվածը պիտի պարունակի հղում առ

11.1. Publications made during the project implementation should be included in:

- at least in Q4 of international peer-reviewed journals, if the topic is from the field of medicine or natural sciences (at least one article),
- in journals recommended by the Higher Education and Science Committee if the topic is related to social sciences (at least two articles).

11.2. It is necessary to indicate the YHU affiliation. The article must contain a reference to the fact that the research was

այն, որ հետազոտությունը կատարվել է համալսարանի դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ:

1. **Նախագծի** իրականացման ընթացքում **Խմբի անդամները** պետք է ապահովեն **նախագծի** կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և հանրայնացում (հարցազրույցներ, հրապարակումներ գիտահանրամատչելի ամսագրերում, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), ինչպես նաև հետազոտության արդյունքները առարկայական ծրագրերում ներդնելու հնարավորություն: Վերոնշյալը հաշվի կառնվի ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:
2. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ խմբի ղեկավարը մրցութային հանձնախմբին է ներկայացնում տարված աշխատանքների մասին հաշվետվությունը՝ մինչև 10 էջ ծավալով:
3. Հաշվետվությանը կարող են կցվել հետազոտությանն անմիջապես առնչվող և այն լրացնող հավելվածներ. գրականության ցանկ, ելակետային տվյալներ, փորձարարական աշխատանքների նկարագրեր և արդյունքներ, լուսանկարներ, տեսաֆիլմեր և այլն:
4. Հաշվետվությունն ընդունելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնախումբը կայացնում է որոշում՝ հաշվետվությունը հաստատել, լրամշակման ուղարկել կամ չհաստատել՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով խմբի ղեկավարին: Հաշվետվությունը ենթակա է հաստատման, եթե ամբողջությամբ համապատասխանում է մրցույթի պայմաններին:
5. Հաշվետվությունն ուղարկվում է լրամշակման, եթե այն բավարարում է մրցույթի ոչ բոլոր պայմաններին և կարող է առանձին դրույթների լրացման պայմանով կրկին ներկայացվել հաստատման: Նշված դեպքերում խմբի ղեկավարը՝ հանձնախմբի որոշումը ստանալուց հետո 10

conducted with the support of the university's grant program.

1. During the project's implementation, the team members must ensure the creation and dissemination of scientific materials on the project or a given field of science (interviews, publications in popular scientific journals, creation and distribution of videos, organisation of discussions for a broad audience, etc.), as well as the opportunity to incorporate the results into subject programmes. This will be considered when accepting the final report.
2. The team leader must submit to the competition committee a report on the work performed, up to 10 pages in length, no later than 15 working days before the end of the contract period.
3. The report may include appendices directly related to and supplementing the research: a list of literature, baseline data, descriptions and results of the work, photographs, videos, etc.
4. After accepting the report within three working days, the committee decides whether to confirm it for further review, send it back, or not approve it, informing the team in writing. The report is subject to approval if it fully complies with the terms of the competition.
5. If the report is not satisfactory and does not meet all conditions, it is sent back for further processing. It may be resubmitted for approval, subject to the completion of required provisions. In the cases indicated, the team leader revises the report within ten working days of receiving the committee's

աշխատանքային օր ժամկետում լրամշակում է հաշվետվությունը և կրկին ներկայացնում հաստատման:

6. Հաշվետվությունը չի հաստատվում, եթե չի բավարարում մրցույթի պայմաններին: Հաշվետվությունը չհաստատելու կամ լրամշակման ուղարկելու պարագայում դրան կցվում են հիմնավորումները:
7. Հաշվետվությունը հաստատելու մասին որոշումը 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է ԵՀՀ ռեկտորին՝ պայմանագրի վերջնահաշվարկի և այն վճարելու առաջարկությամբև հետազոտության արդյունքները հրապարակելու երաշխավորությամբ:

decision and resubmits it for approval.

6. The report will not be approved if it does not meet the competition conditions. It will be sent for revision along with an explanation and recommendations for improvement.
7. The decision on approval of the report is presented to the YHU rector within two working days: the contract is finalised, with a suggestion to pay for it and a guarantee to publish the research results.

Հավելված 1. Դիմում-հայտի ձև
Appendix 1. Application Form

Ամիս, ամսաթիվ
Date: _____

ԵՀՀ դրամաշնորհների հատկացման
մրցութային հանձնախմբին
To the YHU Competition Committee

_____
ա. ա. հ., ամբիոն, գիտական աստիճան և կոչում, հեռախոս և էլ. հասցե

From _____
Name, position, scientific degree, telephone and email

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ
APPLICATION

Խնդրում եմ ընդունել ԵՀՀ գիտահետազոտական դրամաշնորհների մրցույթին ներկայացված _____վերնագրով հայտը:
Հաստատում եմ, որ ծանոթ և համաձայն եմ մրցույթի պայմաններին:

Please accept the submission to the YHU Research Grants Competition of the application titled _____
I confirm that I am familiar with the terms and that my application complies with the competition's requirements.

Խմբի ղեկավար՝
Team leader:_____
ստորագրություն signature անուն, ազգանուն name

Հավելված 2. Նախագիծ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

(մինչև 12 էջ ըստ հետևյալ բովանդակության՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը)

1. Նախագծի համառոտ բնութագիրը (անոտացիա)
2. Դրված խնդրի ներկա վիճակի վերլուծությունը
3. Նպատակները և խնդիրները
4. Հետազոտական նախագծի նկարագրությունը (5 էջ)
5. Նախագծի իրականացման գիտական մեթոդները
6. Աշխատանքների իրականացման ժամանակացույց (Գանտի աղյուսակ)

Գործողության նկարագրություն \ ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Օրինակ. Նախապատրաստում	X											
Գրականության ուսումնասիրություն	X	X	X									
...												

7. Խմբի ձեռքբերումները տվյալ ոլորտում
8. Անհրաժեշտ միջոցները
9. Ակնկալվող վերջնարդյունքները
10. Օգտագործված գրականության ցանկը (ցիտման MLA կամ APA ձևով, եթե հղումը SJR ինդեքս ունեցող պարբերականներում ներառված չէ՝ MLA կամ APA համազոր ձևով)
11. Նախընտրելի և անցանկալի փորձագետների անուն/ազգանուններ
12. Ծախսերի նախահաշիվըստ ներկայացված օրինակի

	1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (12 ամսվա, ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները, հազար դրամ)	
	Խմբի անդամի ա. ա. հ., գործառույթ	
1.		
2.		
3.		
...		
	2. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում	
2.1.	ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)	
2.2.	ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)	
2.3.	ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ (անհրաժեշտության դեպքում)	
2.4.	Այլ	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ՝	

Ծախսերի նախահաշվի մեկնաբանություն

Appendix 2. Project

PROJECT TITLE

(maximum 12 pages, including graphs, drawings, photographs and bibliography)

1. Brief description (annotation) of the project
2. Definition and analysis of the problem or present condition
3. Goal and objectives
4. Research project description (5 pages)
5. Project implementation methods (scientific approach)
6. Work implementation schedule (Gantt chart or table)

Activity description \ month	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
For example: Preparation	X											
Literature review	X	X	X									
…												

7. Team's achievements in this field
8. Necessary means
9. Expected results
10. List of used literature (in MLA or APA citation format)
11. Preferred and unwanted experts' names
12. Budget estimate, for example:

BUDGET (salary for 12 months, including taxes and other mandatory payments, thousand AMD)		
N	Team member name, role	Salary
1.		
2.		
3.		
4.		
…		
2. OTHER EXPENSES, including		
2.1.	EQUIPMENT, MATERIALS AND SERVICES (justify expenses estimate interpretation in the budget narrative)	
2.2.	TRIP (justify the estimate in the budget narrative)	
2.3.	OVERHEAD EXPENSES (if necessary)	
2.4.	Other	
	TOTAL AMOUNT:	

Հավելված 3. Գիտական փորձաքննության փորձագետի գնահատման թերթիկ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0,5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

5	**Գերազանց:** Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:
4	**Շատ լավ:** Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:
3	**Լավ:** Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:
2	**Միջին:** Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:
1	**Վատ:** Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:
0	**Շատ վատ:** Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՀԱՐՑԱՇԱՐ

1.	**Արդի վիճակի վերլուծություն:** Որքանո՞վ է համապարփակ վերլուծված ոլորտի արդի վիճակը:	
2.	**Նախագիծ:** Որքանո՞վ են հստակ ձևակերպված գիտական ծրագիրը, լուծվելիք խնդիրներն ու նպատակները:	
3.	**Նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող գիտական թեման:	
4.	**Մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական թեմային:	
5.	**Նախագծի պլանավորում:** Որքանո՞վ են համապատասխանում գիտական թեմայի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն և որքանո՞վ են դրանք իրատեսական:	
6.	**Խմբի կազմ:** Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը թեմայի իրականացմանը:	
7.	**Իրականացման նախադրյալներ:** Որքանո՞վ են բավարար առկա և (կամ) ձեռք բերվելիք հնարավորությունները նախագծի իրականացման համար:	
8.	**Համագործակցություն**: Որքանո՞վ է նախագծի իրականացումն ընդգրկում համագործակցություն (միջազգային, միջբուհական, ՀՀ առաջավոր գիտական կենտրոնների հետ):	
9.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումն ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն և որքանո՞վ է հիմնավորված նախահաշիվը:	
10.	**Արդյունքների տնօրինում:** Որքանո՞վ է հստակ ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը (այդ թվում՝ գիտահանրամատչելի) և որքանո՞վ են ակնկալվող արդյունքները համապատասխանում ֆինանսավորմանը:	
	Փորձագետի գնահատականը (**10** գնահատականների գումարը, առավելագույնը՝ **50** միավոր)	

Փորձագետի մեկնաբանություններ (ծավալը չի սահմանափակվում)

Նախագծի ներկայացման գնահատման մեկնաբանություն (հարցաշարի 1-5 կետեր)
Հետազոտության իրականացման գնահատման մեկնաբանություն (հարցաշարի 6-10 կետեր)

Appendix 3. Scientific examination expert evaluation sheet and questionnaire

EVALUATION SHEET

Please answer each question with a score of a maximum of 5 points (with an accuracy of 0.5 points), according to the following principles:

5. Excellent: The answer fully corresponds to the requirements, and the shortcomings are insignificant.

4. Very good: The answer to the question meets the requirements with some reservations.

3. Good: The answer generally meets the requirements, although there are significant inconsistencies, which, however, can be fixed.

2. Average: The answer is insufficient to make a complete opinion.

1. Bad: The answer is presented superficially and vaguely.

0. Very bad: The answer to the question is absent or impossible to decide because of a lack of information.

EXPERT QUESTIONNAIRE

1.	**Problem analysis.** How comprehensive is the analysis of the problem or situation in the sector?	
2.	**Project:** How clear are the project and its goals formulated to solve the problem?	
3.	**Novelty**: How innovative is the proposed approach?	
4.	**Methods:** To what extent do the proposed methods correspond to scientific practice?	
5.	**Project planning:** To what extent is the implementation of the research planned to reach its goals? How realistic is their achievement?	
6.	**Team composition:** To what extent do the team's composition and professional qualifications correspond to the project implementation?	
7.	**Implementation prerequisites:** How sufficient are the available opportunities or those to be created during the implementation to realize the project?	
8.	**Collaboration**: To what extent does the project implementation involve cooperation (international, inter-university, and leading Armenian scientific centres)?	
9.	**Budget:** To what extent does the budget correspond to the required funding amount, and how will its distribution help to meet the research objectives? How much are the expenses justified?	
10.	**Results management:** How clear is formulated research results management (including popular science), and how much do the expected results match the funding?	
Expert assessment (**10** grades, maximum: **50** units)		

Expert's Comments (volume not limited)

Project presentation evaluation comment (questions 1-5)
Research implementation evaluation comment (questions 6-10)

Հավելված 4. Հանձնախմբի հարցազրույցի գնահատման թերթիկ և հարցաշար

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 10 միավոր (1 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

10	**Գերազանց:** Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:
8	**Շատ լավ:** Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:
6	**Լավ:** Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:
4	**Միջին:** Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:
2	**Վատ:** Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:
0	**Շատ վատ:** Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:

ՀԱՐՑԱՇԱՐ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ

1.	Որքանո՞վ է կազմված սահիկաշարը արտացոլում ներկայացված նախագծի դրույթները:	
2.	Որքանո՞վ է խմբի ղեկավարը հստակ ձևակերպում նախագծում ներկայացված խնդիրները և դրանց լուծման ուղիները:	
3.	Որքանո՞վ է առաջարկվող գիտական թեման համապատասխանում ԵՀՀ ռազմավարությանը:	
4.	Ի՞նչ սկզբունքով է ընտրված խմբի կազմը:	
5.	Որքանո՞վ է խմբի ղեկավարը հստակ և հակիրճ ձևակերպում իրեն առաջադրված հարցերի պատասխանները:	
Հանձնախմբի գնահատականը (**5** գնահատականների գումարը, առավելագույնը՝ **50** միավոր)		

Appendix 4 . Committee interview evaluation sheet

EVALUATION SHEET

Please answer each question with a maximum score of 10 points, according to the following principles:

10. Excellent: The answer fully corresponds to the requirements, and the shortcomings are insignificant.

8. Very good: The answer to the question meets the requirements with some reservations.

6. Good: The answer generally meets the requirements, although there are significant inconsistencies, which, however, can be fixed.

4. Average: The answer is insufficient to make a complete opinion.

2. Bad: The answer is presented superficially and vaguely.

0. Very bad: The answer to the question is absent or impossible to decide because of a lack of information.

QUESTIONNAIRE FOR THE COMMITTEE MEMBER

1.	To what extent did the slide show reflect the presented project provisions?	
2.	How clearly did the team leader formulate the analysis of the problems and their ways to solve them?	
3.	How relevant is the proposed scientific topic to the YHU strategy?	
4.	How adequate were the principles for selecting the team composition?	
5.	How clearly and briefly did the team leader formulate the answers to the questions?	
Committee member assessment (**5** grades the amount, maximum: **50** unit)		

Հավելված 5. Հայտի գնահատման ամփոփիչ թերթիկ
Appendix 5 . Application evaluation summary sheet

ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐ
APPLICATION EVALUATION SUMMARY SHEET

	Թեմայի անվանումը Title of the project	Ամփոփիչ միավոր Final score	Վարկանիշը Rating
1.			
2.			
3.			
4.			
5.			
6.			

Մրցութային հանձնախմբի ղեկավար՝
Head of the Competition Committee: _____

ա. ա. հ., ստորագրություն, ամիս, ամսաթիվ Name, signature, date